Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

364
331.3(47-41)

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ՅԵՎ ԿՈԼԽՈԶՆԵՐԻՆ ԿԻՑ ՊԵՏՎԱՐԿԻՆ ՅԵՎ ԽՆԱՅԳՈՐԾԻՆ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ „ՀՆԳԱՄՅԱԿԻ 3-ՐԴ ՎՃՌԱԿԱՆ ՏԱՐՎԱ" ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼԻՏ 6673 (Բ)
ՊԱՏՎԵՐ 3939
ՏԻՐԱԺ 5000

«Հնգամյակը չորս տարում» փոխառության 2-րդ բաժինը «Հնգամյակի 3-րդ վճռական տարվա» փոխառությունը հանդիսանում է մինչև այժմ բաց թողած մասսայական փոխառություններից ամենախոշորը:

Այդ փոխառության իրացման պլանը 1,700 միլլոն ռուբլի յե:

Կոլխոզնիկների և մենատնտեսների մեջ պիտի իրացվի 500 միլլոն ռուբլի: Փոխառության իրացման պլանը կատարելու համար պահանջվում է ընդգրկել փոխառության մեջ քաղաքի և գյուղի աշխատավոր մասսաներին լրիվ 100 տոկոսով:

Բանվորը բաժանորդագրվում է փոխառությանը վոչ պակաս, քան իր մեկ ամսվա աշխատավարձի չափով. յուրաքանչյուր կոլխոզնիկը և մենատնտեսը—իր յերեք շաբաթվա յեկամուտ, կամ 21 աշխատանքի-օրվա աշխատավարձի չափով:

Փոխառության իրացման պլանի կատարումը պահանջում է բոլոր հասարակական կազմակերպությունների, առաջին հերթին օժանդակող հանձնաժողովների մաքսիմում ակտիվություն:

Յուրաքանչյուր ոժանդակող հանձնաժողով պիտի հանդիսանա տվյալ գյուղի, կոլխոզի բոլոր կամպանիաների կազմակերպող կենտրոնը: Ոժանդակող հանձնաժողովը կարող է իր խնդիրները կատարել միայն հենվելով առաջին հերթին կոլխոզի ակտիվի, կոլխոզային դաշտերի հարվածայինների, չքավոր—միջակային ակտիվի, գյուղի կուլտուրական աշխատավորների, հասարակայնության և սովխոզների ու մեքենատրակտորային կայանների ակտիվի վրա: Ոժանդակող հանձնաժողովի առաջին հիմնական խնդիրն է՝ կամպանիան տանելու համար մոբիլիզացիայի յենթարկել գյուղի ակտիվը: Աշխատավորների աճող ակտիվությունը, նոր փոխառությունը բաց թողնելուց առաջ մասսայական պահանջները—հանդիսանում են գրավական այն բանի, վոր նոր փոխառության իրացումը կոլխոզների և մենատնտեսների մեջ կառաջացնի ենտուզիազմի, նախաձեռնության և հանդիպական պլանների նույնպիսի ալիք, ինչպես քաղաքի բանվորների մեջ:

Գյուղխորհուրդներին և կոլխոզներին կից ոժանդակող հանձնաժողովների յերկրորդ խնդիրն է—գլխավորել այդ նախաձեռնությունը:

Փոխառության իրացումը գյուղում կանցկացվի դասակարգային պայքարի սրված պայմաններում: Այդպիսի պայմաններում կուլակը պիտի ձգտի խանգարել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հզոր զենքի փոխառության հաջող տեղավորմանը:

Կուլակը կտանի հակահեղափոխական ագիտացիա ընդդեմ փոխառության և կաշխատի խուսափել փոխառության պարտատոմսերը գնելուց:

Ոժանդակող հանձնաժողովի 3-րդ խնդիրն է—չե-



1-2890գր

զոքացնել կուլակի թշնամական ագիտացիան և ներգրավել նրան փոխառության պարտատոմսերի գնման մեջ:

Այս «ուղեցույցի» մեջ, նշված են հիմնական պրակտիկ ձեռնարկումները, վորոնք պիտի կատարվեն յուրաքանչյուր ոժանդակող հանձնաժողովների կողմից:

Ոժանդակող հանձնաժողովը իրեն գյուղում և կոլխոզում կամպանիայի հաջողությունը կարող է ապահովել միայն այն դեպքում, յերբ կամպանիան կազմակերպվի ծրագրված ձևով:

«Ուղեցույց»-ը պիտի ոգնի ոժանդակող հանձնաժողովներին կազմակերպելու փոխառության տեղավորումը, վորպես խոշոր քաղաքական կամպանիա, կապելով այդպիսին գյուղում տարվելիք մյուս կամպանիաների հետ:

## Ա. ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.—

1. Փոխառության իրացումը կատարվում է լրիվ կամավորության սկզբունքներով—լայն հասարակական ագիտ-բացատրական աշխատանքների հիման վրա:

2. Կամպանիան պիտի տարվի հարվածային տեմպերով ամենակարճ ժամանակվա ընթացքում և մինչև ոգոստոսի 1-ը հիմնականում պիտի վերջանա:

3. Կամպանիայի հիմնական լոզունգը—«յերեք շաբաթվա յեկամուտը կամ 21 աշխատանքի որվա աշխատավարձը փոխառության մեջ» վերաբերվում է ինչպես կոլխոզնիկներին, այնպես էլ մենատնտեսներին:

4. Բոլոր կամպանիաները տարվում են լայն ծա-

վալված սոցիալիստական մրցման և հարվածայնու-
թյան հիման վրա:

5. Յուրաքանչյուր կոլխոզին կից օժանդակող հանձ-նաժողովը պատասխանատու յե փոխառության տեղա-վորման համար վոչ միայն իր կոլխոզում, այլ և փո-խառության տեղավորումը կազմակերպելու համար մենատնտեսների մեջ:

Կոլխոզային հասարակայնությունը հանդիսանում ե իր գյուղի կամպանիայի կազմակերպողը:

## Բ. ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ.—

1. Գյուղխորհուրդներին և կոլխոզներին կից յու-րաքանչյուր օժանդակող հանձնաժողով պիտի կազմի իր գյուղում, կոլխոզներում կամպանիան անցկացնելու համար օրացուցային ծրագիր:

2. Ծրագիրը պիտի նախատեսնի բոլոր անհրաժեշտ ձեռնարկումները, նրանց անցկացման ժամկետները և կատարողներին:

3. Ծրագրի կատարման վրա պիտի սահմանվի ա-մենօրյա հսկողություն: Հսկողությունը պիտի հանձ-նվի հատկապես օժանդակող հանձնաժողովի անդամնե-րից մեկին: Կամպանիայի ընթացքում օժանդակող հանձնաժողովի յուրաքանչյուր նիստում լսվում ե ին-ֆորմացիա ծրագրի կատարման մասին:

## Գ. ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.—

1. Գյուղխորհրդին կից օժանդակող հանձնաժողո-վը պիտի կապվի այն վարկային հիմնարկի հետ, վորին կցված ե գյուղխորհուրդը և ստանա նրանից բոլոր ան-



հրաժեշտ ագիտացիոն և գործառնական նյութերը: Կոլ-խոզին կից օժանդկող հանձնաժողովն ստանում ե այդ նյութերը գյուղխորհրդից:

2. Գյուղխորհրդին կից օժանդակող հանձնաժողո-վը պիտի —ա) ստուգի իր անձնական կազմը և հարց հա-րուցի գյուղխորհրդի և ՀԿԿ(բ)-ի բջիջի առաջ-նրա ամ-րացման համար. բ) կոլխոզի վարչության հետ միասին պիտի ստուգի կոլխոզին կից օժանդակող հանձնաժողո-վի անձնական կազմը և կազմակերպի այդպիսիք այն-տեղ, վորտեղ կազմակերպված չեն. գ) ստուգել առան-ձին գյուղերի իր լիազորներին՝ նրանց աշխատունակու-թյան տեսակետից և նշանակել նրանց այնտեղ, վորտեղ չկան:

3. Գյուղխորհրդին կից օժանդակող հանձնաժողո-վը դնում ե. ա) գյուղխորհրդում և կուսբջիջում կամ-պանիան անցկացնելու խնդիրը, ներկայացնելով օժան-դակող հանձնաժողովի կամպանիայի մասին աշխա-տանքի ծրագիրը հաստատելու համար:

բ.—Հրավիրվում ե գյուղական ամբողջ ակտիվը և մանրամասնորեն տալիս ե նրան փոխառության և կամ-պանիայի անցկացման կարգի մասին ինֆորմացիոն տե-ղեկություններ:

4. Կոլխոզի վարչությունը խնդիր ե դնում կամ-պանիայի մասին և, կոլխոզի օժանդակող հանձնաժո-ղովի հետ միասին հրավիրում ե կոլխոզի ակտիվի և հարվածայինների ժողով, ուր քննում են կամպանիան անցկացնելու խնդիրները:

5. Մինչեվ կամպանիան սկսելը գյուղխորհրդին կից օժանդակող հանձնաժողովը հրավիրում ե հատուկ ժողովներ.— ա) չքավորական ակտիվի, բ) կին պատ-

դամավորների, կազմակերպելու համար նրանց գործուն մասնակցությունը կամպանիայի մեջ:

6. Կոմբջիջի հետ միասին, գյուղխորհրդին կից օժանդակող հանձնաժողովը նշանակում է զեկուցողներ ինչպես ընդհանուր, այնպես էլ խմբակային ժողովներում և տանում է նրանց հետ մանրամասն զրույցներ, փոխառության մասին:

7. Կոլխոզին կից օժանդակող հանձնաժողովը կոչում է իր անդամներին, ակտիվիստներին և հասարակական հրահանգիչներին, կոլխոզների առանձին խմբերին և բրիգադներին նրաց մեջ փոխառության բաժնեգրությունն անցկացնելու համար, հրահանգում է ընտրված բրիգադներին, մատակարարում է բաժնեգրման թերթերով, և փոխառության մասին անհրաժեշտ նյութերով:

8. Գյուղխորհրդին և կոլխոզին կից օժանդակող հանձնաժողովը կամպանիան սկսելուց առաջ կախում է գյուղի աչքի ընկնող բոլոր վայրերում պլակատներ, աֆիշաներ, լոզունգներ և այլն, հատկապես զարդարելով գյուղխորհրդի շենքը, խրճիթ-ընթերցարանը, կոլխոզի վարչությունը:

9. Գյուղօժանդակող հանձնաժողովը բաց է թողնում պատի թերթի հատուկ համար՝ նվիրված փոխառությանը: Նույնն է կատարում կոլխոզին կից օժանդակող հանձնաժողովը:

10. Կոլխոզի վարչությունը ապահովում է օժանդակող հանձնաժողովին ամեն տեսակի օգնություն կամպանիան ծավալելու համար:



## Դ. ԺՈՂՈՎՆԵՐ.—

1. Կոլխոզների մեջ բաժնեգրությունը և մենատնտեսների մեջ պարտատոմսերի վաճառքը կատարելուց առաջ տեղի յեն ունենում լայն ժողովներ:

2. Ժողովները պիտի անցկացվեն յուրաքանչյուր գյուղում, յուրաքանչյուր կոլխոզում և յուրաքանչյուր բրիգադայում:

3. Ժողովներն անց են կացվում նախապես կազմված օրացուցային ծրագրերով:

4. Ժողովները պիտի անցկացնել միանգամայն կազմակերպված ձևով: Մինչև ժողովը պիտի տարվի լայն ինֆորմացիա հրավիրվելիք ժողովի մասին, նրա համար, վորպեսզի ապահովվի ժողովականների 100 տոկոսյա ներկայությունը: Ժողովի օրը նպատակահարմար է կազմակերպել գյուղում մասնակիորեն պիոներների և դպրոցականների յերթ:

5. Ընդհանուր ժողովներում ձևակերպվում է կոլխոզնիկների և մենատնտեսների պահանջները՝ փոխառության իրացման հանդիսական պլանների ընդունման մասին:

## ՅԵ. ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ՄԵՋ

1. Նույն ժողովում և վոչ ուշ, քան ընդհանուր ժողովի հաջորդ օրը, պիտի ձեռնամուխ լինել բաժնեգրության անցկացմանը:

2. Բաժնեգրությունը պիտի անցկացվի ամենակարճ ժամանակվա ընթացքում:

3. Կոլխոզի օժանդակող հանձնաժողովի անդամը,

*բրիգադիրը, հասարակական հրահանգիչը, ակտիվիստը, իր խմբի մեջ բաժնեգրություն կատարողը, պետի մանրամասն բացատրի, վոր բաժանորդն ինքը պետի ընտրի փոխառության այս կամ այն մասը, այս կամ այն պարտատոմսերը:*

## Զ. ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ.—

*Լրացված բաժնեգրության թերթերը հանձնվում են կոլխոզին կից ուժանդակող հանձնաժողովին, վորը ստուգելով ընդգրկման լրիվ լինելը, հանձնում է այդպիսիք գյուղխորհրդին: Վերջինս կազմակերպում է բաժանորդներից հասանելիք մուծումների գանձումները և բաժնեգրությունը ձևակերպում և վարկային հիմնարկում:*

2. *Վոչ մի դեպքում չի թույլատրվում բաժնեգրման թերթերի ուշացումը կոլխոզներին կից ուժանդակող հանձնաժողովի կողմից:*

3. *Ուժանդակող հանձնաժողովը չի կարող իր վրա վերցնել բաժնեգրության վորևէ դրամական հաշվարկում և դրամի գանձում: Դրամական բաժնեգրության բոլոր հաշվարկումները տանում է գյուղխորհուրդը՝ լիազորների միջոցով:*

4. *Կոլխոզին կից ուժանդակող հանձնաժողովը հետևում է, վորպեսզի գյուղխորհուրդն իր կոլխոզնիկների բաժնեգրությունը ձևակերպի ամենակարճ ժամանակվա ընթացքում և հետագայում կանոնավոր կերպով մուծի հավաքված գումարները վարկային հիմնարկության:*



*Գյուղխորհրդի կողմից բաժնեգրության ձևակերպումը, կամ մուծումների ուշացվելու դեպքում, ուժանդակող հանձնաժողովը պարտավոր է անմիջապես հայտնել այդ մասին շրջանի ուժանդակող հանձնաժողովին, վարկային հիմնարկությանը և իր կոլխոզի վարչությանը:*

## Է. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԱՃԱՌՔԸ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՄԵՋ.—

1. *Մենատնտեսների մեջ փոխառության իրացման հիմնական մեթոդը հանդիսանում է տնային այցելությունները:*

2. *Կոլխոզի ուժանդակող հանձնաժողովն իր սովխոզի և մեքենատրակտորային կայանի ակտիվի հետ միասին կազմակերպում է յեռանդուն ոգնություն՝ մենատնտեսների մեջ փոխառության իրացման համար:*

3. *Տնային այցելություններ կատարելու համար կոլխոզներից և չքավոր-միջակային ակտիվից, արձակուրդի մեջ գտնվող կարմիր բանակայիններից, ուսուցիչներից, խրճիթվարներից, կին պատգամավորներից և այլն—կազմակերպվում են բրիգադներ:*

4. *Գյուղական ուժանդակող հանձնաժողովը գյուղխորհրդի յուրաքանչյուր գյուղը բաժանում է թաղամասերի: Յուրաքանչյուր թաղամասին կցվում է բրիգադ, վորը և տանում է բոլոր ագիտ-բացատրական աշխատանքները և կատարում է տնային այցելությունները:*

5. *Մենատնտեսներին պարտատոմսերի վաճառքը կատարվում է կանխիկ վճարով, խնայդրամարկղների և*

գյուղխորհուրդների կողմից հատկապես այդ նպատակով գյուղական ակտիվից ներգրավված կոնտրագենտների միջոցով:

6. Տնտեսությունների այցելությունների համար կազմակերպված յուրաքանչյուր բրիգադայի մեջ մըտնում է կոնտրագենտը, որը այցելության ժամանակ վճարում է պարտատոմսերը մենատնտեսներին:

7. Տնտեսությունների այցելությունները կազմակերպվում են ժողովն անցկացնելուց հետո:

## Ը. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ՄԵՋ.—

1. Փոխառության իրացումը կոլխոզնիկների մեջ կատարվում է գյուղական օժանդակող հանձնաժողովի կողմից կայուն առաջադրանքների կարգով, որը հասցվում է մինչև յուրաքանչյուր կոլխոզային տնտեսությունը:

2. Յուրաքանչյուր կոլխոզի դրույքը որոշվում է օժանդակող հանձնաժողովի և դրա հետ միասին կոլխոզային և չքավորական ակտիվի կողմից:—Բայց ոչ գյուղխորհրդի կողմից:

3. Փոխառության վերաբերյալ համապատասխան առաջադրանքները չկատարող կոլխոզների նկատմամբ ձեռք են առնվում հասարակական ներգործման միջոցներ, նույնիսկ մինչև հասարակական բոյկոտի կազմակերպումը:

4. Պարբերական հիշեցումներով, հաջորդական այցելություններով, կոլխոզի տանը կոմյերիտական բրիգադներ, կինոպատգամավորական խմբեր և այլն ու-



ղարկելով, օժանդակող հանձնաժողովը կատարում է փոխառության վերաբերյալ առաջադրանքները:

## Թ. ՍՈՑՄՐՑՈՒՄ.—

1. Գյուղօժանդակող հանձնաժողովը կազմակերպում է սոցմրցում տվյալ գյուղում—փոխառության հաջող իրացման համար:

2. Սոցմրցումը կազմակերպվում է կոլխոզային և մենատնտեսական սեկտորների, առանձին գյուղերի, գյուղխորհուրդների և այլնի միջև: Կոլխոզային սեկտորում, սոցմրցումը կազմակերպվում է կոլխոզների, բրիգադաների, առանձին կոլխոզնիկների, ինչպես կոլխոզների—սովխոզների և մեքենա—տրակտորային կայանների միջև:

3. Սոցմրցման հիմնական ցուցանիշները պետք է լինեն

ա) կոլխոզի և մենատնտեսների 100 տոկոսյա ընդգրկումը փոխառության մեջ:

բ) կամպանիայի հիմնական լոզունգի իրացումը՝ յերեք շաբաթվա յեկամուտը (կամ 21 աշխատանքօրյա աշխատավարձը) փոխառության մեջ ներգրավելու խընդիրը·

գ) կոլխոզնիկների բաժնեգրության արագ ձևակերպումը·

դ) կոլխոզնիկ—բաժանորդներից մուծումների կանոնավոր գանձումը·

յե) մուծումների ամենաարագ հանձնումը գյուղխորհուրդներին, իսկ վերջիններս վարկային հիմնարկությանը·

գ) մասսայական աշխատանքների լավ կազմակերպումը․

ե) պարտատոմսատերերին սպասարկելու համար․ աշխատանքների կանոնավոր դրվածքը (պարտատոմսերի իր ժամանակին ամրացում կոլխոզներին, շահումների ստուգում և այլն․)

4․ Ոժանդակող հանձնաժողովը պատրաստում է սոցմրցման պայմանագրի նախագիծ և նշում է գյուղը, կոլխոզը, բրիգադը և այլն, վորոնք հրավիրվում են սոցմրցման։ Պայմանագիրը քննվում և ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից։

5- Սոցպայմանագրի կատարման ընթացքի վրա սահմանվում է հսկողություն, վորը կատարվում է այդ նպատակի համար ակտիվից ընտրված բրիգադայի կողմից։ Պայմանագրի ստուգման արդյունքների մասին ինֆորմացիա յե տրվում ընդհանուր ժողովում։ Այդ նպատակի համար պատրաստվում են հատուկ տախտակներ։

Սոցմրցման ընթացքը լուսաբանվում է նաև գյուղի, կոլխոզի պատի թերթերում։

## Ժ․ ՇԵՖՈՒԹՅՈՒՆ․—

1․ Փոխառության իրացման ժամանակվա ընթացքում, քաղաքի կոլեկտիվներից յուրաքանչյուրի ոժանդակող հանձնաժողովը, վերցնում է այն շրջանի, գյուղի կամ կոլխոզի ոժանդակող հանձնաժողովի շեֆությունը, վորի շեֆությունը իր վրա յե վերցրել ձեռնարկությունը։

2․ Գյուղոժանդակող հանձնաժողովի կողմից շե-



ֆության վերաբերյալ ոգնությունը պիտի ցույց տրվի հետևյալ ձևով․—

ա) ուղարկում է իր յենթաշեֆ հանձնաժողովին կամպանիան անցկացնելու ծրագրի որինակը։

բ) մատակարարում է ագիտ—գրականությամբ․

գ) ապահովում է կենդանի հրահանգումը ուղարկելով յենթաշեֆ շրջան, ձեռնարկության ոժանդակող հանձնաժողովի անդամներից և փոխառության առանձին ակտիվիստներից, ինչպես և ցույց է տալիս գրավոր ոգնություն կամպանիայի խնդիրների մասին։

3․ Գյուղխորհուրդներին և կոլխոզներին կից ոժանդակող հանձնաժողովները պիտի կապվեն իրենց շեֆերի հետ և պահանջեն նրանցից ակտիվ ոգնություն, ինչպես խորհուրդներով, այնպես էլ գործով։

## Ժա․ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԲՈՒՔՍԻՐ․—

1․ Կամպանիան հաջողությամբ տարած գյուղխորհրդին և կոլխոզին կից յուրաքանչյուր ոժանդակող հանձնաժողով, պարտավոր է համարակական բուքսիրի վերցնել մեկ—յերկու գյուղխորհուրդների, կոլխոզների այն ոժանդակող հանձնաժողովներին, ուր կամպանիան թույլ է ծավալված։

2․ Բուքսիրը կազմակերպել, ոժանդակող հանձնաժողովը նշանակում է բրիգադներ, գործնական ոգնություն ցույց տալու համար յետ մնացող գյուղխորհուրդներին և կոլխոզին։

3․ Բրիգադան հրավիրում է յետ մնացող գյուղի, կոլխոզի, ոժանդակող հանձնաժողովի հատուկ նիստ և նրա հետ միասին մշակում են յետ մնացող գյուղերում,

կոլխոզում կամպանիան ուժեղացնելու հատուկ աշխատանքի ծրագիր:

4. Այդ ծրագրի համաձայն, հասարակական բուքսիրն իրագործող ոժանդակող հանձնաժողովը վերցնում է իր վրա ձեռնարկումները կատարելու՝ իր ուժերով:

5. Այն պարտավորությունները, վորն իր վրա յե վերցնում բուքսիրը վերցնող ոժանդակող հանձնաժողովը, պետք սահմանափակված լինեն վորոշ ժամկետով, վորի ընթացքում պետք կատարվեն այդ պարտավորությունները:

## ԺԲ. ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԸ.—

1. Կամպանիայի ժամանակաընթացքում, ոժանդակող հանձնաժողովը պարտավոր է սերտ կապ հաստատել գյուղի, կոլխոզի պատի թերթերի խմբագրական կոլեգիաների հետ:

2. Գյուղխորհրդին և կոլխոզին կից ոժանդակող հանձնաժողովներն ապահովում են—

ա) պատի թերթերի հատուկ համարի բացթողումը կամպանիայի սկզբին.

և ընթացքի մասին պատի թերթերում հատուկ անկյուն

բ) գյուղում, կոլխոզում կամպանիայի ծավալման և ընթացքի մասին պատի թերթերում հատուկ անկյուն կազմակերպելը:

գ) սոցմրցման ընթացքի պարզաբանումը պատի թերթում, այդ նպատակի համար թերթում սահմանվում են սև և կարմիր տախտակներ:

3. Կամպանիայի ամբողջ ժամանակաընթացքում ոժանդակող հանձնաժողովի անդամը պետք կցված լինի պատի թերթի խմբկոլեգիային, վորի պարտականու-



1-28909

թյունն է հետևել, վորպեսզի գյուղում, կոլխոզում տարվող կամպանիան արտացոլվի թերթի յուրաքանչյուր համարում:

## ԺԳ. ԲՐԻԳԱԴԱՆԵՐ.—

1. Կամպանիան անցկացնելու ժամանակ ակտիվը նպատակահարմար կերպով ոգտագործելու համար, ոժանդակող հանձնաժողովը կազմակերպում է ակտիվիստներից բրիգադաներ, առանձին-առանձին առաջադրանքներ կատարելու համար:

2. Բրիգադաները պետք հատկացվեն գյուղի, կոլխոզի առանձին բնագավառներն սպասարկելու համար:

3. Յուրաքանչյուր բրիգադային տրվում է վորոշակի առաջադրանք. բրիգադաների մեջ կազմակերպվում է սոցիալիստական մրցում:

4. Բրիգադաների մեջ պետք ներգրավեն պետական վարկի ակտիվիստները հասարակական հրահանգիչները, կոմյերիտականները, կին ակտիվը և այլն:

5. Նպատակահարմար է կազմակերպել հատուկ բրիգադա կոլխոզնիկներից՝ մենատնտեսների ժողովներին կազմակերպված ձևով մասնակցելու և տնային այցելություններ կատարելու համար:

## ԺԴ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐ.—

1. Գյուղխորհուրդներին և կոլխոզներին կից ոժանդակող հանձնաժողովները հատուկ աշխատանք պետք կատարեն հասարակական հրահանգիչների հետ:

2. Մինչև կամպանիան անհրաժեշտ է ընտրել հա-

սարակական հրահանգիչներ և ունենալ նրանց հետ զրույցներ:

3. Հասարակական հրահանգիչների օգնությամբ օժանդակող հանձնաժողովները կազմակերպում են տեղեկատու բյուրոներ՝ փոխառության հետ կապված ամեն տեսակի հարցերի մասին տեղեկություններ տալու համար: Այդ բյուրոներում սահմանվում է հերթապահություն օժանդակող հանձնաժողովի անդամներից և հասարակական հրահանգիչներից:

4. Հասարակական հրահանգիչների մի մասը պիտի տրվի շրջանի օժանդակող հանձնաժողովի տրամադրության տակ:

## ԺԵ. ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—

1. «Հնգամյակը չորս տարում փոխառության անցյալ շահող վիճակահանությունների արդյունքները պետք է օգտագործվեն հնգամյակի «3-րդ վճռական տարվա» փոխառության իրացման կամպանիայի ծավալման համար:

2. Յուրաքանչյուր վիճակահանությունից հետո պետք է կազմակերպել գյուղում, կոլխոզում շահումների մասսայական ստուգում:

Ստուգումը, հնարավորության սահմաններում, անհրաժեշտ է կազմակերպել տանը, կոլխոզային դաշտերում, բրիգադայում:

3. Հայտնաբերված շահումները նպատակահարմար է վճարել հանդիսավոր կերպով, կազմակերպելով դրա համար հատուկ յերեկո ժողովրդական տան մեջ, կարմիր անկյունում, խրճիթ ընթերցարանում և այլն:



4. Յուրաքանչյուր վիճակահանության հարցը պետք է լայն կերպով մասսայականացվի կոլխոզնիկների, մենատնտեսների ժողովներում, լուսաբանելով պատի թերթերում և այլն:

## ԺԶ. ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ.—

1. Կոլխոզին կից օժանդակող հանձնաժողովը կանոնավոր կերպով գյուղխորհրդին ներկայացնում է կոլխոզնիկների կոլեկտիվ բաժնեգրության մասին տեղեկություններ:

2. Այդ տեղեկությունները տրվում են գյուղխորհրդին յուրաքանչյուր 10 օրը մեկ անգամ. տեղեկություններում նշվում են.—

ա) կոլխոզի անդամների ընդհանուր քանակը.

բ) քանի՞ հոգի յեն բաժնեգրվել ընդհանուր քանակից

գ) և ի՞նչ գումարի.

3. Գյուղխորհուրդն ու օժանդակող հանձնաժողովը ստացված տեղեկությունները ամփոփում են (այդ. աշխատանքին մասնակից են դարձնում ուսուցչին, գյուղատնտեսին, խրճիթվարին և այլն, գյուղի կուլտ-աշխատակցին) և մենատնտեսներին կանխիկ վաճառքով վաճառված տեղեկությունների հետ միասին ներկայացնում են շրջան:

## ԺԷ. ԴՐԱՄԻ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀ

1. Կոլխոզի վարչությունը և կոլխ
հանձնաժողովը ցույց են տալիս ամեն տ
թյուն գյուղխորհրդի լիազորին, որը

ՀՀ Ազգային գրադարան
NL0836693

67
1
2850

կոլխոզնիկ—բաժանորդներից գ[illegible]
համար։

2. Կոլխոզի ոժանդակող հանձնաժողովը հետեվում է, վորպեսզի մուծումների կատարման ժամկետները, վորոնք սահմանված են կոլխոզնիկների ընդհանուր ժողովում պահպանվեն։ Անհրաժեշտության դեպքում կոլխոզի ոժանդակող հանձնաժողովը հրավիրում է այդ խնդրի մասին կոլխոզնիկների ժողով։

3. Ցուրաքանչյուր գյուղխորհրդի ոժանդակող հանձնաժողով հետեվում է, վորպեսզի՝

ա) գանձումներ կատարող գյուղխորհրդի լիազորը կոլեկտիվ կոլխոզնիկ բաժանորդներից գանձումները կատարի իր ժամանակին և անմիջապես հավաքված գումարները հանձնի գյուղխորհուրդ։

բ) կոնտրագենտները չպահեն իրենց մոտ մենատընտեսներին վաճառված պարտատոմսերից ստացված դրամը․

գ) փոխառության իրացումից գյուղխորհուրդ ընդունված դրամն անմիջապես մուծվի վարկային հիմնարկություն։

4. Ստուգելու համար, թե արդյոք կոլեկտիվ բաժանորդության կոլխոզնիկների մուծումներն իր ժամանակին կատարող կոնտրագենտների կողմից հավաքված գումարներն ժամանակին մուծում են վարկային հիմնարկը թե վոչ, այդ նպատակի համար գյուղական ոժանդակող հանձնաժողովն ընտրում է հատուկ բրիգադներ (կամ ոգտագործում է գոյություն ունեցող բրիգադաները)։

---